ՀՏԴ 797.2 DOI: 10.53068/25792997-2023.3.10-45

ՍՊՈՐՏԱՅԻՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԵՎ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆ ԸՄԲՇԱՄԱՐՏՈՒՄ

Ա. Հ. Մարտիրոսյան
Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան

Առանցքային բառեր: Սպորտային կողմնորոշում, սպորտային ընտրություն, տաղանդների բացահայտում, ֆիզիկական որակներ, ֆիզիոլոգիական ցուցանիշներ, հոգեբանական առանձնահատկություններ:

Հետազոտության արդիականություն: Վաղուց հայտնի է, որ գործունեության տարբեր տեսակներ մարդուց պահանջում են տարբեր որակներ և հմտություններ, որին ոչ բոլորն են հավասարապես տիրապետում: Դեռ Հիպոկրատն էր մարդկանց փորձում դասակարգել՝ ըստ կառուցվածքամորֆոլոգիական հատկանիշների, որպեսզի որոշեր նրանց նախատրամադրվածությունն այս կամ այն գործունեությանը: Հին Եգիպտոսում, Չինաստանում, Հունաստանում մարդու ֆունկցիոնալ կարողությունների և հնարավորությունների գնահատման գաղափարը կիրառվել է դարեր առաջ: Հին Չինաստանում ձևավորվել էր ընտրության հզոր դպրոց, որտեղ շեշտը դրվում էր մարդու մորֆոֆունկցիոնալ առանձնահատկությունների վրա:

Վերոնշյալից անմասն չի մնացել նաև սպորտային գործունեությունը:

Ավելի ուշ մեզ հայտնի մասնագիտական ընտրության օրինակներն ի հայտ են եկել դեռ 1960-ական թվականներից, երբ Ռուսաստանում սկսվեց նոր թափով կիրառվել զինվորականների մասնագիտական ընտրության հոգեբանական և հոգեֆիզիոլոգիական մեթոդները:

Ժամանակակից սպորտը հասել է այն մակարդակի, որ նոր ռեկորդներ սահմանելու համար մարզիկը պետք է ունենա բացառիկ մորֆոլոգիական տվյալներ՝ համադրված յուրահատուկ ֆիզիկական և հոգեբանական ունակություններով, որոնք գտնվում են զարգացման բարձր մակարդակի վրա: Այսպիսի համադրումներն անգամ բազմամյա լավագույն պատրաստության դեպքում շատ հազվադեպ են հանդիպում: Այդ իսկ պատճառով բարձր նվաճումների սպորտում ընտրության և կողմնորոշման հարցն առավել քան արդիական է: Սրանից անմասն չէ նաև ըմբշամարտը և այս մարզաձևում օժտված երեխաների հայտնաբերումն ու ընտրութ-

յունը մնում է մասնագետների ուշադրության կենտրոնում: Մարզիկի հետագա նվաճումները բխում են մարզաձևի ճիշտ ընտրությունից և տվյալ մարզիկի հոգեբանական, ֆիզիոլոգիական և մորֆոլոգիական համապատասխանությունից՝ ընտրված մարզաձևին: Ընդ որում՝ մասնագիտական ընտրության հարցը կարևոր է մասնագիտական կարիերայի ամբողջ ընթացքում՝ մարզաձևի ընտրությունից սկսած մինչև մրցումներին մասնակցության ժամանակը:

Առկա են սպորտային ընտրության հիմնահարցին նվիրված բազմաթիվ ընդհանրական գիտական աշխատանքներ, որոնք, սակայն շեշտը դնում են ավելի շատ անտրոպոմետրիկ տվյալների, մանկավարժական ցուցանիշների, ոչ այդքան հաճախ բժշկակենսաբանական և գենետիկ տվյալների վրա [5, 6, 10, 11, 12]: Իսկ համապատասխան համալիր հետազոտություններ, նվիրված ըմբշամարտում սպորտային ընտրության տարբեր փուլերում հոգեբանական և ֆիզիոլոգիական ցուցանիշներին՝ սակավաթիվ են:

Ըմբշամարտի միջազգային ֆեդերացիան խորհուրդ է տալիս ըմբշամարտով զբաղվել 8 տարեկանից, սակայն մեր մանկապատանեկան մարզադպրոցներում ըմբշամարտի պարապմունքները հիմնականում սկսվում են 10-12 տարեկանից, բացառիկ դեպքերում կարող է սկսվել ավելի վաղ: Սակայն այս տարիքում շատ երեխաներ արդեն ներգրավված են այլ մարզաձևերում: Այն երեխաները, որոնք չեն զբաղվում սպորտային գործունեությամբ, որոշ չափով բաց են թողնում շարժողական ընդունակությունների զարգացման համար բարենպաստ ժամանակաշրջանը՝ կրտսեր դպրոցական տարիքը, որը պետք է առավելագույն արդյունավետությամբ օգտագործվի առողջությունը բարելավելու, սպորտի նկատմամբ կայուն հետաքրքրություն զարգացնելու և հիմք ստեղծի ապագա մարզական նվաճումների համար: Այս առումով սպորտային ընտրության և կողմնորոշման հարցն ավելի քան արդիական է ըմբշամարտում:

Հետազոտության նպատակը: Հետազոտության նպատակն է՝ ուսումնասիրել ըմբշամարտում սպորտային կողմնորոշման և ընտրության տեսական մոտեցումները:

Հետազոտության խնդիրները:

1. Ծանոթանալ հայրենական և արտասահմանյան հեղինակների կողմից առաջարկված սպորտային ընտրության մոտեցումներին ըմբշամարտ մարզաձեվում:

2. Պարզել դրանց նմանությունները, տարբերություններն ու գործնական կիրառելիությունը:

Հետազոտության մեթոդները և կազմակերպումը: Կատարվել է համա-

պատասխան գիտամեթոդական գրականության ուսումնասիրություն, ընդհանրացում և վերլուծություն:

Հետազոտության արդյունքների վերլուծություն: Սպորտային կողմնորոշումը և ընտրությունը համալիր բնույթի կազմակերպչամեթոդական միջոցառումների համակարգ է, որը թույլ է տալիս որոշել տվյալ մարզաձևի ընտրության առանձնահատկությունները և անհատի նեղ մասնագիտացումն այդ մարզաձևում:

20-րդ դարասկզբին ամերիկացի գիտնական Պարսոնսնը և գերմանացի հոգեբան Մյունստերբերգն առաջիններն էին, որ որոշել էին գիտականորեն հիմնավորել կադրերի ընտրությունը: Սակայն կադրերի ընտրության համակարգում արմատական փոփոխությունները տեղի ունեցան 20-րդ դարի 20-ական թվականներին, երբ տարածվեց Թեյլորի աշխատանքները՝ կապված աշխատանքի գիտականորեն կազմակերպման հետ: Նա մեծ ուշադրություն էր դարձնում աշխատողներ փնտրելու և ընտրելու որոնման համակարգին, ինչպես նաև ղեկավարի գործունեության գնահատմանը: Թեյլորի մեթոդից օգտվում էին ԱՄՆ-ն, Գերմանիան, Ֆրանսիան և այլ երկրներ, միաժամանակ փորձելով ստեղծել իրենց համակարգները: Արդյունքում՝ մասնագետներին հաջողվեց ստեղծել մի շարք քարտային հավաքածուների «մասնագիտական փսիխոգրամաներ» և ըստ այբբենական կարգի՝ մասնագիտություններ [11]:

Կատարված գրական աղբյուրների վերլուծությունը ցույց է տալիս, որ սպորտային ընտրության և կողմնորոշման հարցը գրեթե միշտ եղել և մնում է ոլորտի մասնագետների ուշադրության կենտրոնում: Շատ երկրներում անգամ գործել և գործում են սպորտային ընտրության համակարգեր [3]:

Բարձր նվաճումների սպորտը՝ որպես էքստրեմալ պայմաններում գործունեության ձև, ուղեկցվում է բարձր նյարդահոգեբանական և ֆիզիկական լարվածությամբ, որը պահանջում է դիպուկության, արագության և գործողությունների բարդության բարձր մակարդակ, և մարդկանց, որոնք պատրաստ են հասնել սպորտային բարձր վարպետության: Բոլոր մենապայքարային մարզաձևերը և ըմբշամարտը հատկապես, մարզիկներից պահանջում են գերմարդկային ջանքեր, բարձր ֆիզիկական և հոգեբանական պատրաստվածություն, որը սակայն ոչ բոլոր մարզիկների է տրված: Ըմբիշներն օրական կարող են մի քանի պարապմունք ունենալ, բացի այդ մրցումների ընթացքում մարզիկներն օրվա մեջ ունենում են 3-5 մենամարտ, որը մարզիկից մեծ պատրաստվածություն է պահանջում. այստեղ ավելի է կարևորվում սպորտային ընտրության դերը:

Սպորտային ընտրությունն առավել օժտված մարդկանց որոնման գործընթաց է, որոնք կարող են հասնել առավելագույն բարձր արդյունքների կոնկրետ մարզաձևում: Սպորտային ընտրության՝ որպես համակարգի ձևավորման համար պահանջվել է 25 տարի՝ սկսած 60-ականների սկզբից մինչև 80-ական թվականները: Այդ ընթացքում սկսել է ձևավորվել մարզական ընտրության տեսությունը և երևան են եկել այդ թեմային նվիրված հիմնական աշխատությունները, որոնք էլ հիմք են դրել այդ ոլորտի զարգացմանը (М.С. Бриль 1980, 1983; В.М. Волков, 1979; В.М. Волков, 1986; В.П. Филин, 1983; В.Б. Шварц, 1977; СВ. Хрущев, 1984): Այդ շրջանի կարևոր առանձնահատկություններից է այն, որ սկսել էին ինտենսիվորեն ձևավորվել մարզիկների և մարզաձևերի ընտրության տարբեր բնութագրական մոդելներ (Г.С. Туманян, 1976; Э. Г. Мартиросов, 1976; Т. С. Тимакова, 1976; В. С. Гориневская, 1976; М.С. Бриль, 1980; А.В. Ивойлов, 1971; С.И. Ляссотович, 1971, В. П. Филин, 1987): Մարտիրոսյանն (2022) իր աշխատանքի մեջ վերլուծելով տարբեր երկրներում գոյություն ունեցող սպորտային ընտրության գործող համակարգերը, համապատասխան աղյուսակով՝ որպես օրինակ, ներկայացրել է պրոֆեսոր Ֆիլինի կողմից ներկայացված մարզադպրոցի համար երեխաների ընտրության գործընթացը, որը նա բաժանել էր 3 փուլի՝ այդ փուլերում ներառելով կենսաբժշկական, հոգեբանական և մանկավարժական մեթոդները: Որոշ հեղինակներ, ըմբշամարտում ընտրության գործընթացը կազմակերպելիս, հիմնվում են հենց այդ փուլերի վրա:

Ըմբշամարտում բարձր նվաճումների հասնելը պայմանավորված է մարզիկի ֆիզիկական, հոգեբանական և տեխնիկատակտիկական պատրաստվածության որակական և քանակական ցուցանիշներով (Нестеров А.А., Левицкий А.Г., 2000; Тараканов Б.И., 2000; Апойко Р.Н., Тараканов Б.И., 2013): Սակայն որոշ մասնագետներ կարծում են, որ միայն գենետիկ նախատրամադրվածությունով երեխաները կարող են հասնել բարձր նվաճումների: Գենետիկական բնութագրիչներից կարևոր դեր են խաղում մորֆոֆունկցիոնալ ցուցանիշները, որոնք պայմանավորում են էներգապահովման համակարգերի աշխատանքը, ֆիզիկական որակների զարգացվածությունը, հարմարվողականությունը, մարզվածությունը և աշխատունակությունը (Солодков А.С., 2006; Ахметов И.И., 2009; Сологуб Е.Б., Таймазов В.А., Афанасьева И.А., 2017):

2007 թվականին Լոկենցևն իր թեկնածուական ատենախոսության մեջ նշել է, որ շատ կոնստիտուցիոնալ ցուցանիշների հետազոտություններ ցույց են տվել, որ գենետիկ ազդեցությունը դրսևորվում է հիմնականում օրգանիզմի

մորֆոլոգիական առանձնահատկություններում, ավելի քիչ օրգանիզմի ֆիզիոլոգիական ցուցանիշներում, և գրեթե աննշան՝ հոգեբանական ցուցանիշներում: Յուրաքանչյուր մարզաձևի համար պահանջվում է կարողությունների որոշակի համալիր, որոնցում առանձնացնում են առաջատար, երկրորդային և լրացուցիչ կարողություններ [7]:

Միևնույն ժամանակ, Բրիլը, Ֆիլինը, Գրոշենկովը և այլք ուսումնասիրել են ըմբշամարտում ընտրության մանկավարժական ասպեկտները: Հիմնվելով նրանց հետազոտությունների վրա՝ գործընկերներ Սիրիսը և Գայդարսկան համարում են, որ ընտրության գործընթացում մանկավարժական ուղղվածությունն առաջատարն է, որը միավորում է այլ ուղղվածությունների մասնագետների կողմից ստացված տվյալները [5]:

Սակայն Չանգը և համահեղինակներն (2017) աշխատանքներում նշվում են, որ սպորտային ընտրության արդյունավետության բարձրացման համար առաջին հերթին պետք է լուծել բարձրակարգ մարզիկների մոդելավորման հարցը՝ հիմնավորելով մարզական ընտրության չափանիշերը: Դրա հետ մեկտեղ մոդելային բնութագրիչները պետք է լինեն ինչպես ընդհանուր՝ տարբեր մարզաձևերի համար, այնպես էլ ընդհանուր՝ մարզաձևերի խմբերի համար (ընդհանրացված), ինչպես նաև յուրահատուկ՝ առանձին մարզաձևի համար: Մոդելավորման գործընթացում անհրաժեշտ է հաշվի առնել ժամանակի ընթացքում օրգանիզմում տեղի ունեցող փոփոխությունները և ցանկալի է այդ գործընթացը լինի բազմամյա (լոնգիտուդինալ) հետազոտությունների արդյունք [17]:

Մոդելավորման գործընթացում պետք է հաշվի առնել նաև այն, որ ֆիզիկական զարգացման ցուցանիշները և այնպիսի ֆիզիկական որակները, ինչպիսիք են՝ ճկունությունը, արագաշարժությունը և ճարպկությունը, առավել տեղեկատվական են մարզումների նախնական ընտրության փուլում: Պաուտկինի և համահեղինակների կարծիքով, հետագայում ֆիզիոլոգիական և հոգեբանական ցուցանիշները ձեռք են բերում պրոգնոստիկ արժեք [8]:

Ըմբշամարտի մեջ մասնագիտացած մարզիկների մոդելային բնութագրերի ուսումնասիրության ժամանակ շատ հեղինակներ նշում են, որ ըմբիշներն ունեն լայն կուրծք և քաշ-հասակ ինդեքսների բարձր ցուցանիշներ: Հատկապես հետաքրքիր են տարբեր քաշային կարգերի ըմբիշների կազմվածքը վերլուծող աշխատանքները, որոնցում առկա է մարմնի ծավալային հատկանիշների մեծ փոփոխականություն: Որպես կանոն՝ կան երեք պայմանական քաշային խմբեր՝ թեթևքաշայիններ, միջին և ծանրքաշայիններ:

Ըստ Գ.Ս. Թումանյանի և համահեղինակների՝ ըմբիշի արդյունավետությունը որոշվում է ոչ միայն մորֆոլոգիական առանձնահատկություններով, այլև տեխնիկական գործողությունների ճիշտ կիրառմամբ, ֆիզիկական, մարտավարական, հոգեբանական պատրաստվածության մակարդակով: Համաձայն պրոֆեսոր Վ.Մ. Վոլկովի և համահեղինակների ուսումնասիրությունների՝ որքան մարզիկի մարմնակազմությունը մոտ է տվյալ մարզաձևին յուրահատուկ մարմնակազմությանը, այնքան մարզիկը մեծ հաջողությունների կհասնի ընտրված մարզաձևում [15, 5]:

Շատ կարևոր է, որ բարձրակարգ մարզիկների մոդելային բնութագրիչների մեջ ընդգծված լինեն նաև օրգանիզմի կարևորագույն ֆիզիոլոգիական ցուցանիշների աստիճանը: Որպես ըմբշամարտիկների կարևորագույն ֆիզիկական որակներ՝ առանձնացնում են հատուկ դիմացկունությունը, պայթուցիկ ուժը, ճկունությունն ու ճարպկությունը:

Ի հավելումն վերը թվարկված ընտրության չափանիշերի, Փիլոյանը և Կուզմինան նշում են, որ ըմբշամարտում մարզիկի նվաճումների համար կարևոր նախապայման է նպատակասլացությունը: Յուրաքանչյուր ըմբիշ մրցումների ժամանակ ձգտում է հաղթանակի, սակայն ավելի հաճախ հաղթում է նա, ում մոտ այդ նպատակը հստակ ձևավորված է: Այդ իսկ պատճառով, նպատակասլացությունն ըմբշամարտում կարող է ծառայել որպես մարզիկների ընտրության չափանիշ [5, 16]:

Մեր կողմից ուսումնասիրված գրական աղբյուրների վերլուծությունը թույլ է տալիս ենթադրել, որ սպորտային ընտրությունը և կողմնորոշումն ավելի պատկերավոր կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.



Տրամագիր 1. Մարզիկների ընտրության համակարգի բաղադրիչները և փուլերը

Ընտրության համակարգի արդյունավետ աշխատանքի համար հավասարապես կարևոր են բոլոր փուլերը և բաղադրիչները: Օրինակ՝ պրոֆեսոր Պլատոնովն ընտրության գործընթացը բաժանում է 6 փուլի, որոնցում կիրառում է տրամագրում ներկայացված գրեթե բոլոր բաղադրիչները, որոնց համալիր կիրառման արդյունքում միայն կարելի է հասնել ցանկալի արդյունքի [9] :

Կատարված ուսումնասիրություններն առաջ են բերում հետևյալ պնդումները.

1. Մասնագիտական ընտրությունն ըմբշամարտում կարևորվում է ինչպես առողջության պահպանման և սպորտային նվաճումների, այնպես էլ տնտեսական ցուցանիշների և, հատկապես դրանց խնայողության տեսանկյունից:

2. Շատ կարևոր է ապագա չեմպիոններին բացահայտել հենց սկզբից, քանի որ դա թույլ կտա հետագայում ժամանակ և միջոցներ խնայել, ինչը կարևորվում է հատկապես ցածր եկամուտ ունեցող երկրների պարագայում:

3. Սպորտային ընտրության միասնական համակարգի առկայությունը կօգնի սկսնակ մարզիչներին ճիշտ և գիտահեն որոշումներ կայացնել՝ հնարավորինս խուսափելով սխալ ընտրությունից:

4. Բացի ընտրության հիմնական և կիրառելի մեթոդներից, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել և ավելի խորն ուսումնասիրել հոգեֆիզիոլոգիական մեթոդները, որը կարող է լրացուցիչ կարևոր ցուցանիշներ բացահայտել:

Եզրակացություն: Սույն հոդվածի, ինչպես նաև ատենախոսության համար օգտագործվող բոլոր գրական աղբյուրների վերլուծությունից հանգում ենք հետևյալ եզրակացության.

1. Կարևոր է սպորտային ընտրության փուլայնությունը և այն, որ մարզական գործունեության ցանկացած փուլում ընտրությունը մնում է արդիական:

2. Ընտրության արդյունավետ մոդելը պարունակում է հետևյալ բաղադրիչները՝ մանկավարժական, բժշկակենսաբանական, հոգեֆիզիոլոգիական:

3. Բարձրակարգ մարզիկների մոդելավորումը կարող է նպաստել սպորտային ընտրության համակարգի կատարելագործմանը:

4. Ընտրության գործընթացում կարևոր տեղ է զբաղեցնում մոտիվացիան և նպատակասլացությունը, որն առաջնային և հավասարապես կարևոր է ընտրության բոլոր փուլերում:

🕮 ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գասպարյան Հ.Ս., Ընտրությունը և վաղ մասնագիտացումը սպորտում, Ուսումնական ձեռնարկ, Երևան, 2015, 88 էջ:
2. Մարտիրոսյան Ա. Հ., Տարբեր երկրների սպորտային ընտրության համակարգերի համեմատական վերլուծություն, Գիտությունը սպորտում. արդի հիմնախնդիրներ, № 2 (6) Երևան, 2022
3. Շախյան Ա. Հ., Սկզբնական ընտրության ժամանակակից մոտեցումները բռնցքամարտում, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, 2019, 78 էջ:
4. Винниченко А. А., Козляков А. В., Разновидность индивидуального подхода при отборе в спортивные секции по вольной борьбе. Теория и методика спортивной тренировки. 2010. №3 с.11-15.
5. Волков Л. В., Выбор спортивной специализации. Киев 1973.
6. Гробовникова И.Ю., Лебедь Т.Л., Соловьева Н.Г, Писарчик Г.А., Мельнов С.Б.,- Антропогенетическое прогнозирование результатов спортивной деятельности Веснік Палескага дзяржаўнага універсітэта. Серыя прыродазнаўчых навук. 2012. №1. С. 10–17.
7. Леконцев Е.В., Генетическая обусловленность некоторых показателей физических способностей человека: автореф.канд. биол. наук. М., 2007. 22 с.
8. Марищук В.Л., Блудов Ю.М., Серова Л.К. Психодиагностика в спорте: учеб. пособие для вузов. М.: Просвещение, 2005. 349 с.
9. Мартиросов Э.Г., Балучи Р. Морфологические особенности футболистов высокой квалификации разных амплуа // Теория и практика футбола. 2004. № 3 (23). С. 27–32;
10. Никитин С.Н., Никифоров Н.В., Горенко В.В., Герасимов С.И., Занин Л.В., Использования уровня ловкости в соревновательной деятельности высококвалифицированных самбистов // Физическая культура и здоровье. 2018. № 2 (66). С. 74–76):
11. Пауткин А.В., Самсонов М.М., Антонюк С.Д., Соматотипологический подход в прогностической оценке двигательной одаренности юных спортсменов // Теория и практика физической культуры. 2007. № 8. С. 40–42
12. Платонов В. Н., Система подготовки спортсменов в олимпийском спорте. Общая теория еепрактические приложения. М. : Советский спорт, 2005. 536-564 с.

13. Сергиенко Л.П., Спортивный отбор: теория и практика: моногр. М.: Советский спорт, 2013. 1048 с.
14. Тараканов Б.И., Спортивная борьба: Эволюция, тенденции, проблемы и приоритетные пути их решения: моногр. СПб. : Изд-во Политехн. ун-та , 2015. 94 с.;
15. Туманян, Г.С. Спортивная борьба: отбор и планирование / Г.С. Туманян. – Москва : Физкультура и спорт, 1984. – 144 с.
16. Филин В.П., Волков В.М., Спортивный отбор. - М.: Физкультура и спорт, 1983. - 176с.
17. Chang, E. C., Najarian, A. S.-M., Chang, O. D., Hill, G. M., & Lee, J. (2017). Athletic competence as a central facet of sport orientation among collegiate athletes. Journal of Sport Behavior, 40, 269-277
18. Podrigalo S., Romanenko L., Tropin V., Boychenko Y., Rovnaya N., Kamaev O., (2016). Psycho-physiological features of sportsmen in impact and throwing martial arts. Journal of physicaleducation and sport, 16(2), 433-439. doi:10.7752/jpes.2016.02067
19. Ciocan, D. M., Milon, A., & Mareş, G. (2017). Study Regarding the Motives of Children Participation in Sport Activities. In C. Ignatescu, A. Sandu, & T. Ciulei (eds.), Rethinking Social Action. Core Values in Practice (pp. 159-168). Suceava, Romania: LUMEN Proceedings https://doi.org/10.18662/lumproc.rsacvp2017.15
20. Lohbeck A, Hohmann A, von Keitz P, Daseking M. Children's Motivation Profiles in Sports and Physical Activities: A Latent Profile Analysis and Self-Determination Theory Approach. J Sport Exerc Psychol. 2022 Apr 22;44(4):251-262. doi: 10.1123/jsep.2021-0279. PMID: 35453117.

ANALYSIS OF THEORETICAL APPROACHES TO SPORTS ORIENTATION AND SELECTION IN WRESTLING

A.H. Martirosyan
Armenian state institute of physical culture and sport, Yerevan, Armenia

ABSTRACT

Keywords: Sport orientation, sports selection, talent identification, physical qualities, physiological indicators, psychological characteristics.

Research relevance: This study highlights the importance of selecting athletes in wrestling and it is focused on an individual's qualities and skills. It draws on the historical context of Hippocrate attempt to classify people according to their structural features to determine their predisposition to specific activities.

Research aim: To review the scientific and methodological literature on the topic.

Research methods and organization: The research methodology involved a comprehensive review of relevant literature in the field

Research result analysis: The analysis of the results reveals that sport orientation and selection comprise of a complex system of measures helping to determine the appropriate sport and narrow specialization for individuals. The literature review demonstrates that sports selection and orienteering in wrestling have consistently been the focus of attention for specialists in the field. Sports selection is aimed at identifying the most gifted individuals who have the potential to excel in a particular sport. It has been a crucial aspect of coverage for approximately 25 years. Pedagogical methods of sports orientation are used to assess the development of abilities, physical qualities, and technical skills in young athletes. However, the study acknowledges that many other authors emphasize the importance of considering the motivation and psychological characteristics of the child.

C**onclusion:** Identifying talent is crucial for identifying promising athletes and can save time and resources. It is recommended to identify future champions from an early stage. In addition to pedagogical and physiological factors, psychological factors are deemed equally important for achieving success in sports.

АНАЛИЗ ТЕОРЕТИЧЕСКИХ ПОДХОДОВ К СПОРТИВНОЙ ОРИЕНТАЦИИ И ОТБОРУ В БОРЬБЕ

А. Г. Мартиросян
Государственный институт физической культуры и спорта Армении, Ереван, Армения

АННОТАЦИЯ

Ключевые слова. Спортивное ориентирование, спортивный отбор, выявление талантов, физические качества, физиологические показатели, психологические особенности.

Актуальность исследования. Давно известно, что разные виды деятельности требуют от человека разных качеств и умений, которыми не все обладают в равной степени. Еще Гиппократ пытался классифицировать людей по их структурно-морфологическим признакам, чтобы определить их предрасположенность к той или иной деятельности. Для достижения высоких спортивных результатов важен правильный выбор вида спорта и направленности, которая по-прежнему занимает важное место в науке о спорте.

Цель исследования. Заключалась в анализе научно-методической литературы по теме.

Методы и организация исследования. Проведено изучение, ознакомление и анализ актуальной научно-методической литературы.

Анализ полученных результатов. Спортивное ориентирование и отбор – это система организационно-методических мероприятий комплексного характера, позволяющая определить специфику выбора того или иного вида спорта и узкую специализацию личности в этом виде спорта. Анализ литературных источников показывает, что вопрос спортивного отбора и ориентирования в борьбе практически всегда находился в центре внимания специалистов в данной области. Во многих странах даже действуют системы спортивного отбора. Чтобы стать системой, спортивный отбор охватил примерно 25 лет. Педагогические методы спортивной ориентации позволяют оценить уровень развития способностей, физических качеств и технических навыков юных спортсменов. Однако многие другие авторы считают, что мотивация и психологические особенности ребенка также важны.

Краткие выводы. Выявление талантов является важным фактором в выявлении перспективных борцов. Очень важно определить будущих чемпионов с самого начала, так как это впоследствии сэкономит время и средства. Помимо педагогических и физиологических факторов необходимо обращать внимание на психологические факторы, которые не менее важны для достижения спортивных высот.

Տեղեկություններ հեղինակի մասին

Աննա Համլետի Մարտիրոսյան՝ ասպիրանտ, Ֆիզիկական վերականգնման ամբիոնի դասախոս, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան, E-mail:anna.martirosyan@sportedu.am,
ORCID:0000-0002-2599-510X

Information about the author

Anna Hamlet Martirosyan - PhD student, lecturer of the Chair of Physical Rehabilitation, Armenian State Institute of Physical Culture and Sport, Yerevan, Armenia;
E-mail:anna.martirosyan@sportedu.am, ORCID:0000-0002-2599-510X

Հոդվածն ընդունվել է 21.10.2023–ին:
Ուղարկվել է գրախոսման՝ 23.10.2023–ին:
Գրախոս՝ մ.գ.դ, պրոֆեսոր Ե. Հակոբյան